

# Մեծուվյան փոխկապակցում Black Sea Interconnection (BSI)

Եվրոպական հանձնաժողովի 7-րդ շրջանակային ծրագրի (FP7)  
նախագիծ

Արթուր Պետրոսյան ([arthur@sci.am](mailto:arthur@sci.am))

Հայաստանի ակադեմիական գիտահետազոտական ցանց (ASNET-AM)  
Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ (ԻԱՊԻ)  
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (ՀՀ ԳԱԱ)

<http://bsi.asnet.am>

<http://www.blacksea-net.org>

[www.asnet.am](http://www.asnet.am) [www.sci.am](http://www.sci.am)

# BSI նախագծի նկարագրություն



- Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է նախագծին, որն իրականացվում է Եվրոպական հանձնաժողովի 7-րդ շրջանակային ծրագրի (FP7) կողմից: BSI նախագիծը հարավկովկասյան երկրների ազգային գիտահետազոտական և կրթական ցանցերի (NREN) միջև ստեղծելու է գերարագ մայրուղային ցանց և կապ համաեվրոպական հետազոտական և կրթական GEANT2 ցանցի հետ
- BSI ցանցի շահագործման հանձնումը ենթադրվում է 2009թ. սկզբներին: Այն Հայաստանի գիտահետա-զոտական և կրթական կազմակերպությունների համար կապահովի 34 Մբ/վ կապի արագություն GEANT2 ցանցի հետ:

# BSI նախագծի գործընկերները



- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (ՀՀ ԳԱԱ)
- Scientific and Technological Research Council of Turkey – Turkish Academic Network and Information Center (**TÜBİTAK-ULAKBİM**)
- Greek Research & Technology Network (**GRNET**)
- Central and Eastern European Networking Association (**CEENET**)
- Delivery of Advanced Network Technology to Europe (**DANTE**)
- Georgian Research and Educational Networking Association (**GRENA**)
- Azerbaijan Research Educational Network Association (**AZRENA**)



**BSI** նախագիծը ներառում է տարածաշրջանում առկա ինֆրակառուցվածքների փոխմիացման ռազմավարության զարգացումը, միացումների իրականացումը և ստեղծված ցանցի շահագործման աջակցությունը: Հարավկովկասյան երկրների միջև փոխմիացումների առկայությունը և բավարար հզորություն ունեցող **GEANT2** ցանցի հետ կապը կնպաստի տարածաշրջանում նոր ծառայությունների ներմուծմանը և կարևոր քայլ կլինի տարածաշրջանի գիտական ներուժի Եվրոպայի հետ ինտեգրմանն ընդառաջ:

## Նպատակ 1

*Հարավային Կովկասում տարածաշրջանային գիտահետազոտական և կրթական պատշաճ ցանցի կառուցումն ու նրա միացումը GEANT2-ին:*

BSI նախագույ կկառուցվի տարածաշրջանային գիտահետազոտական և կրթական ցանց, որը կտրամադրի ինֆրակառուցվածք Հարավային Կովկասի գիտական և ակադեմիական հանրության կարիքների համար և կմիացնի այն համաեվրոպական հետազոտական և կրթական GEANT2 ցանցին՝ որպես իր գլխավոր նպատակ:

## Նպատակ 2


### Հարավկովկասյան գիտական ներուժի ինտեգրումը Եվրոպա

Ի հավելումն ցանցային միացումների, համագործակցության և հաղորդակցման ինֆրակառուցվածքի ստեղծումն ու պահպանումը կօգնի հաջողությամբ օգտագործել BSI նախագծի արդյունքները: Հասարակության հետ կապի (PR) միջոցառումները և միջնորդկապերը կխրախուսեն տարածաշրջանի գիտահետազոտական համայնքների ներգրավումը ICT ծրագրերում եվրոպացի գործընկերների հետ՝ որպես հիմք օգտագործելով BSI նախագիծը, և այն կնպաստի Հարավային Կովկասի և Եվրոպայի միջև թվային անհավասարության (digital divide) հաղթահարմանը:

## Նպատակ 3

*Նույնատիպ գիտական համայնքների միջև  
համագործակցության խրախուսում*

Գիտական համայնքների բազմազանությունը, որոնց համար ներկայումս եվրասիական էլեկտրոնային ինֆրակառույցները (ուղիղ կապով գրադարանները, գիտափորձերի արդյունքները) խիստ սահմանափակ են կամ ընդհանրապես մատչելի չեն, նույնպես կշահեն: Սեյսմոլոգները, աստղաֆիզիկայի, բարձր էներգիաների ֆիզիկայի, այլ ոլորտի մասնագետները կլինեն օգտառուի հնարավոր օգտագործողներ:



BSI նախագծի իրականացումով բազմաթիվ գիտական հետազոտություններից ու կրթական ծրագրերից, ինչպես “Հարավային Կովկասում էլ-հասարակությունների զարգացումը” և SEE-GRID-SCI նախագիծը, սպասվող շահն ավելի արդյունավետ կդառնա: Գործողությունների տարածումը կնպաստի բոլոր մասնակիցների և տարածաշրջանի հետազոտական և կրթական համայնքների բոլոր գիտական ճյուղերի կողմից BSI ինֆրակառուցվածքի լայն օգտագործմանը, կապ կպահպանի նմանօրինակ կամ հարակից նպատակներ հետապնդող այլ համաեվրասիական միջոցառումների հետ:

BSI նախագծի օգտագործման պայմանների (Acceptable Use Policy - AUP) նախնական տարբերակը տեղադրված է BSI Հայկական պորտալ կայքում - <http://bsi.asnet.am>

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիան (ՀՀ ԳԱԱ) լինելով BSI նախագծում Հայաստանի ներկայացուցիչը՝ հրավիրում է Հայաստանի բոլոր գիտահետազոտական և կրթական կազմակերպություններին օգտվել կառուցվող BSI ցանցից:

Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր գիտահետազոտական կամ կրթական կազմակերպություն կարող է ընդգրկվել **BSI Տեղական Օգտատուների Ցուցակում** միայն լրացնելով և ներկայացնելով համապատասխան **Հարցաթերթիկը**:

Հարցաթերթիկում նշված տեղեկությունները պետք է լինեն մանրամասն և ճշգրիտ:

Հարցաթերթիկների ընդունման վերջնաժամկետն է՝ **2008թ. դեկտեմբերի 31-ը**:

Հետեւյալ կազմակերպությունները պատասխանել են արդեն լրացրել եւ ուղարկել են հարցաթերթիկը՝

- ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ
- ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան
- ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ
- ՀՀ ԳԱԱ Մաթեմատիկայի ինստիտուտ
- ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտ
- ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն

Հրավիրում ենք ձեզ նույնպես միանալ  
Մեծովյան փոխկապակցում  
**Black Sea Interconnection (BSI)**  
նախագծին

*Շնորհակալություն*